

Վերապատրաստող կազմակերպություն

**ՀՀ ԿԳՄՍ <<ՄարտունուՆ Տ. Աբրահամյանի անվան
ավագ դպրոց> ՊՈԱԿ**

**Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստում**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

*<Տարբերակված
ուսուցման ռազմավարությունների կիրառում
ուսումնառության խթանման համար*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ՝

Հասմիկ Բեյբուլայան

ՈՒՍՈՒՑԻՉ՝

Բալասան Խաչատրյան

ԴՊՐՈՑ՝

<<Աստղածորի միջնակարգ դպրոց>>

Մարտունի-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Նախաբան.....	3
2.Հետազոտական համատեքստ/գրականության ակնարկ.....	4
3.Փորձնական հետազոտություն	5
4.Հետազոտության ընթացք.....	9
4.1. Փորձարարական դաս 1.....	10
4.2. Փորձարարական դաս 2.....	10
5.Վերլուծություն.....	13
6.Եզրակացություն.....	15
7.Գրականություն.....	16
8.Հավելված.....	17

1. Ներածություն

<<Մենք փորձից չենք սովորում: Մենք սովորում ենք այդ փորձի շուրջ վերլուծական անրադարձ կատարելով: >>

Jhon Dewey

Այսօր երեխաների կյանքի բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներով, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով : Նաև աշակերտներին զբաղեցնում են սոցիալական ցանցերը: Մի խոսքով սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Դասարանի երեխաները՝ հիմնականում տղաները անտարբեր են սովորելու հանդեպ:

Որպեսզի սովորելու գործընթացը կազմակերպվի արդյունավետ՝ կիրառել տարբերակված ուսուցման եղանակով ուսուցում՝ հետաքրքիր և մասնակից դարձնելով աշակերտներին, որը միայն ավանդական ուսուցման մեթոդով չի հաջողվում: Չարգացնել երեխայի երևակայությունը համակարգչային դիտումներով, հայտորոշիչ թեստային առաջադրանքներով և հարցերի օգնությամբ ակտիվ ուսուցում կազմակերպել աշակերտների համար առավելագույնս հետաքրքիր և հաճելի դարձնել դասի ամբողջ ընթացքը:

Դասարանում կարողանալիս մնացած աշակերտներին ներգրավել դասի մեջ: Դասը հետաքրքիր դարձնել նաև պասիվ երեխաների շրջանում ձևավորել առողջ մրցակցություն: Ճատ կարևոր է այն հանգամանքը, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին:

Հայաստանի արագ զարգացող կրթական համակարգը գերծ չի մնացել տեղեկատվական տեխնալոգիաների լայն կիրառումից՝ <<քիմիա>> առարկաների դասավանդման մեջ հնարավորինս զուգակցելով ավանդական և ինտերակտիվ մեթոդները: Կարծում եմ որ, այսօր դասապրոցեսի և արտաքին աշխարհի առնչությունները ավելի անմիջական են, ինչը նշանակում է, որ անհնար է

արդյունավետ դասավանդել առանց համակարգչի և ինտերնետի ռեսուրսների, ինչից հաճույքով կօգտվեմ այս հետազոտական աշխատանքը ստեղծելիս:

Գրական ակնարկ

Տարբերակված ուսուցման եղանակը կիրառվել է աշխարհի տարբեր դպրոցներում հիմնված Վիգոտսկու <<Չարգացման մոտակա գոտու>> 1978թ տեսության վրա, ըստ որի սովորողները լավ են սովորում երբ տրված հանձնարարությունները մատչելի են և ոչ թե շատ դժվար: Ինչ է տարբերակված ուսուցումը, դա ուսուցչի կողմից մինևույն բովանդակությունը ռազմավարությունների և բազմաստիճան առաջադրանքների կիրառումն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի կարողությունների մակարդակը:

Ամերիկացի մանկավարժ Քերոլ Էն Թոմլիսոնի կողմից առաջարկվել է տարբերակված ուսուցման չորս հիմնական սկզբունքներ:

1. Ըստ բովանդակության դասակարգման
2. Ըստ գործողության դասակարգման
3. Ըստ վերջնարդյունքի դասակարգման
4. Ըստ կրթական միջավայրի դասակարգման Ըստ Քերոլ Էն Թոմլիսոնի

Տարբերակված ուսուցմը իրականացնելիս հաշվի է առնվում սովորողի՝

- 1. Պատրաստվածությունը կամ կարողությունը**
- 2. Հետաքրքրությունների շրջանը**
- 3. Ուսումնառության ոճը**

Ինչ է դա մեզ տալիս, դա ապահովում է սովորողի շարունակական զարգացում, սովորողի մոտիվացիայի բարձրացում և ուսումնառության արդյունավետության բարձրացում:

Ամփոփելով բերված գրականության վկայությունները, հարկ է նշել, որ այս հետազոտության խնդիրն է փորձնական ճանապարհով առաջադրված խնդրի վերաբերյալ եղած վկայությունների միջոցով կատարել համապատասխան եզրահանգումներ:

Փորձարարական հետազոտություն

Հետազոտական աշխատանքի իրականացման համար որպես թիրախային խումբ ընտրվել է Աստղածորի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի <<քիմիա>> առարկայի դասաժամը:

Աշակերտների մոտիվացիայի բարձրացման և թեմայի լիակատար յուրացման համար ընտրվել է տարբերակված ուսուցման եղանակը, քանի-որ ուսուցման այս եղանակը նպաստում է աշակերտների գիտելիքների մոբիլիզացմանը, ստեղծգործ մտքի զարգացմանը՝ ինչը դրական ազդեցություն ունի ոչ միայն տվյալ առարկայի պարագայում, այլև ընդհանուր զարգացման գործում:

Տարբերակումն իրականացրել են ի պատասխան ունակություններին, այդ իսկ պատճառով դասարանի մակարդակում այն իրականացրել են է ի պատասխան կազմակերպչական ռազմավարություններին առավելապես խմբերի բաժամելու տեսքով: Այս մոտեցման հիմքում ընկած է <<Ընդհանուր>> ունակությունների գաղափարը, այսինքն աշակերտները միևնույն առաջադիմությունը դրսևորեն կրթակարգի բոլոր դասընթացների դեպքում:

Հասանելի դարձնել յուրաքանչյուր դաս բոլոր սովորողների համար՝ ընդունելով, որ ցանկացած աշակերտ ունակ է առաջադիմելու, և հնարավորություն տալ յուրաքանչյուրին առաջադիմելու իր ներուժի չափով:

Հետազոտություն կատարվող դասարանում սովորում են 17 աշակերտ: Աշակերտները 10-ը տղաներ են իսկ 7-ը աղջիկներ: Իմ նախաձեռնությամբ կազմվել է հենակետային տարասեռ փոքր խմբեր, համամասնորեն ընդգրկվելով ուսումնառության արդյունավետության տարբեր արդյունքներ ունեցող աշակերտներ՝ աղջիկներ և տղաներ: Ստեղծված խմբերի քանակը հինգն են:

Սեղաններն ու աթոռները դասավորվել են այնպես, որ հնարավոր իրականացնել համագործակցային աշխատանք և բոլորի համար տեսանելի լինի Էկրանը: Նախօրոք սեղաններին դրել են խմբերի անունները, տետր և գրիչներ: Նախօրոք սեղաններին դրել են նաև խմբային աշխատանքների պատասխանները՝ գրանցելու համար նախատեսված ձևաթղթերը:

Խմբային աշխատանքների թեմաները բաժանելով խմբերի միջև ստեղծել ենք աշխատանքային միջավայր, որոնք գաղափարների փոխանակման հաջորդիվ հնարավոր կլինի զարգացնել ելնելով տվյալ թեմայի բովանդակությունից և սահմանված մակարդակից :

Խմբի անդամների միջև կատարվել է դերերի բաշխում, մշակվել Bloom-ի տաքսոնոմիայի տարբեր մակարդակի մտածական հմտություններ, զարգացնող դասարանային խմբային առաջադրանքներ: Խմբերին տրվել է նույն առաջադրանքը սակայն առաջադրանքի կատարման համար տարբեր ժամանակահատվածներ:

Ցանկացած հաջուրդող առաջադրանք պետք է լինի նպատակային և գրավիչ, որպեսզի խթանի աշխատանքի արագ ավարտը: Աշակերտները աշխատում են նույն առաջադրանքի վրա, սակայն առաջադրանքները բաց են և տարբեր արդյունքների հնարավորություն են տալիս: Օրինակ հայտորոշիչ տեստային առաջադրանքը դասին աշակերտները պետք է ներկայացնեն ճիշտ է, թե սխալ աշխատանքը: Աշակերտները օգտագործում են նույն ռեսուրսները սակայն կատարում են տարբեր առաջադրանքներ : Օրինակ դասի թեման հետազոտելու համար բոլոր աշակերտները օգտվու են համացանցից, սակայն բարձր առաջադիմություն ունեցողները մշակում են զեկույց ,որտեղ պահանջվում է համադրել և գնահատել սեփական բացահայտումները, իսկ ոչ այնքան բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները հետևում են սահմանված ուղենիշներին և գտնում կոնկրետ հարցերի պատասխանները:

Դասի նպատակների և ուսումնառության թիրախների և հետևաբար վերջնարդյունքների ճանաչման արժևորման տարբերակման դեպքում պետք է նաև հստակեցվեն գիտատման չափանիշները: Արդյունքների դինամիկան գնահատելու նպատակով կատարվել է նախնական, միջանկյալ և վերջնական թեստավորումներ: Նախնական թեստավորումները որոշում է սովորողների նախնական գիտելիքները:

Միջանկյալ թեստավորումները կատարում են ուսուցման թեմայի մեծ բաժինները յուրացնելուց հետո: Վերջնական թեստավորումները ամբողջ դասընթացից ստացած գիտելիքների գնահատումն է: Կիրառվել գնահատման այնպիսի համակարգ, որտեղ խմբի յուրաքանչյուր անդամի առաջընթացը ներդրում է ունենում մյուսների վերջնական գնահատականի վրա:

Որպես վկայություններ կատարվել են դասերի վերլուծությունները աշակերտներին տրված առաջադրանքների ձևավորող գնահատականները: Հետազոտական աշխատանքը կատարվել է երկու հաջորդաբար ընթացող դասաժամերի պրոցեսում և ուսումնասիրվել է նյութի յուրացումը և աշակերտների գիտելիքների կուտակումը և գործողությունների յուրացումը այդ ժամանակահատվածում: Առաջին դասի թեման էր <<Ատոմ: Քիմիական տարր: Քիմիական տարրերի տարածվածությունը բնության մեջ:>>, մյուս թեման <<Քիմիական տարրերի նշանները: Քիմիական տարրերի հարաբերական ատոմային զանգված>>:

Հետազոտական աշխատանքը ժամանակակից կազմակերպելու համար կարևոր են արդյունքների մանրակրկիտ հատկորոշումը, կանխորոշումը, նախագծումը և պլանաորումը: Աշխատանքում յուրաքանչյուր դաս ուղղված է սովորողներ ուսուցման, դաստիարակության և զարգացման նպատակների իրագործմանը:

Իմ նպատակն է <<քիմիա>> առարկայի դասաժամերի ժամանակ իմ և սովորողների ուսումնական համատեղ գործունեության նախապես պլանավորված արդյունքների իրականացում: Դասի նպատակները աշակերտների համար պետք է լինի հասկանալի և ընդունելի: նպատակը`

ա. ընդանրացնեն, ամրապնդեն, խորացնեն թեմաների վերաբերյալ ունեցած գիտելիքները:

բ. Ամրապնդել փորձարարական հմտությունները և ունակությունները

գ. Չարգացնել մտածողությունը, համացանցից տեսանյութերը դիտելուց և փորձերը կատարելուց հետո տրամաբանական եզրակացություններ անելու կարողությունները:

դ. Աշակերտների անհատական և խմբային գործունեության տարբեր ձևերի համատեղում:

ե. Դասի գիտականորեն պլանավորում և վարպետորեն անցկացում:

զ. Տվյալ դասընթացի գիտելիքների համակարգում: Աշխարահայացքի ձևավորում: Գիտելիքների որակի և մակարդակի ճշգրտում և պարզաբանում:

Վերջնարդյունք՝

ա. Կզարգացնեն աշակերտների ստեղծագործական հմտությունները:

բ. Կզարգացնեն հարցերի միջուցով ուսումնասիրություններ անելու հմտությունը:

գ. Խթանել ակտիվ մասնակցությունն առաջադրանքի կատարմանը:

դ. Կներկայացնեն նշված թեմաները միջառարկայական կապել այլ առարկաների հետ զարգացնելով Աշխարահայացքը ձևավորել արժեքային համակարգը:

ե. Կզարգացնեն մտքեր փոխոնակելու, խմբային ակտիվ աշխատանք ծավալելու, նշված ժամանակահատվածում առաջադրանքը կատարելու խմբի աշխատանքային կանոնները պահպանելու կարողությունները և հմտությունները:

գ. Կզարգացնեն մտածողությունը վիրտուալ լաբորատորիայով փորձերը կատարելուց հետո տրամաբանական եզրակացություններ անելու կարողությունները:

է. Կզարգացնեն համալիր բնագիտական մտածելակերպը:

ը. Կզարգացնեն իրատեսություն, մտքի հստակություն բանավոր խոսքի մշակույթի զարգացում:

թ. Կզարգացնեն քիմիական հետազոտության կարողությունների ձևավորում:

ժ. Կզարգացնեն մտածողությունը՝ վերլուծության, համեմատության և ընդհարացման միջոցով: Որպես վկայություններ իրականացվել է դասեր վերլուծությունները աշակերտներին տրված առաջադրանքների ձևավորվող գնահատականները:

Չետազոտության ընթացք

Չետազոտության ընթացքի համար որպես թիրախային խումբ ընտրել եմ հիմնական դարոցի 7-րդ դասարանի <<Քիմիա>> առարկան:

*Քիմիան՝ որպես բնագիտության մաս:Քիմիան մեր շրջապատում:

*Մարմին և նյութ: Քիմիական նյութերի տարածվածությունը բնության մեջ:

*Նյութերի հատկությունները, նյութերի ճանաչումն ըստ հատկությունների դիտում, նկարագրում, քիմիական փորձ:

*Մաքուր նյութեր և խարնուրդներ:

*Ֆիզիկական և քիմիական երևույթներ: Աշակերտները արդեն գիտեն այս թեմաները և ես փորձ եմ անում թեմաները միջառարկայական կապել այլ առարկաների հետ զարգացնելով Աշխարահայացքը ձևավորել արժեքային

համակարգը: Ելնելով հետազոտության խնդրից և նպատակ ունենալ տեսնել մտածողության զարգացումը, վկայող ուսումնասիրության արդյունքներ մշակվել Bloom-ի տաքսոնոմիայի տարբեր մակարդակի մտածական հմտություններ, զարգացնող դասարանային և խմբային առաջադրանքներ պարզից բարդ:

Այս հետազոտական համատեքստում կարևորում է հատկապես միջին բարձր մակարդակի մտածական հմտությունների զարգացմանը ուղված արդյունքները:

Փորձարարական դաս 1

Լինելով առաջին հետազոտական դաս իր ձևաչափի մեջ տարբերվում է նախկինում անցակացված դասերից: Աշակերտները նախկինում էլ էին աշխատել խմբերով: Սակայն իմ ընտրությամբ նոր խմբերում կատարվել է դերերի բաշխում, մշակվել դասարանային առաջադրանքների բնույթը :

ԵՎ գնահատման մեջ խմբի առաջընթացումը պայմանավորված յուրաքանչյուր վերջնական գնահատականի ձևավորման եղանակի ընտրությունը պայմանավորված է հենց այս հետազոտության իրականացման շրջանում:

Առաջին դասի թեման <<Ատոմ: Քիմիական տարր: Քիմիական տարրի տարածվածությունը բնության մեջ >> է: Դասը սկսում եմ մտադրոհով, գրատախտակին գրել եմ << նյութ>> հասկացությունը: Աշակերտներին

առաջարկում եմ վերհիշել անցածը, որպեսզի գիտելիքները ամրապնդենք: Այնուհետև խմբերին հանձնարարում եմ պատասխանել հարցերը. ա. Ինչ է ուսումնասիրում քիմիան: բ. Ինչ դեր ունի քիմիան մարդու կյանքում: գ. Տալ նյութ հասկացության սահմանումը: դ. Որոնք են կառուցվածքային մասնիկները: Պարզաբանելով կատարվում է խմբերի և առանձին աշակերտների գնահատում: Աշակերտներին հանձնարարում եմ կատարել գիտելիքները ամրապնդող հայտորոշիչ թեստային առաջադրանք: Կարճ դասախոսության միջոցով աշակերտները գաղափար են կազմում նոր թեմայի մասին:

Աշակերտները գաղափար են կազմում նյութի անբաժանելի մասնիկ ատոմի, քիմիական տարրի մասին: Աշակերտներին հանձնարարում եմ ուսուցանող նպատակով կատարել հետոյալ առաջադրանքները:

1. Պարզ նյութի ,թե քիմիական մասին է խոսքը.

ա. Թթվածինը ջրում քիչ լուծելի գազ է:

բ. Ջրում լուծված թթվածնով շնչում են ձկները:

գ. Երկաթը մետաղ է, որը ձգվում է մագնիսի կողմից:

դ. Թթվածինը մտնում է ջրի բաղադրության մեջ:

ե. Երկաթի սուլֆիդի բաղադրության մեջ կա երկաթ:

զ. Ջրի բաղադրության մեջ կա ջրածին: ճիշտ պատասխանները լրացնել և աղուսյակում

2. ճիշտ է թե սխալ.

ա. Ջուրը կազմված է երկու նյութից` ջրածնից և թթվածնից:

բ. Թթվածին նյութը կազմված է երկու ատոմ թթվածին քիմիական տարրից:

գ. Ածխաթթու գազը կազմված է ածխածին և երկու ատոմ թթվածին քիմիական տարրից:

դ. Շաքարը կազմված է ածխածին ջրածին և թթվածին քիմիական տարրից:

Աշակերտներին առաջարկում եմ ժամացույցի սլաքի ուղղությամբ իրար փոխանցել լրացված հարցաթերթիկները՝ փոխադարձ ստուգման և գնահատման համար՝ ըստ տաս միավորանոց սանդղակի, յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում մեկ միավոր: Էկրանի վրա ցուցադրում եմ ճիշտ պատասխանները:

Փորձարարական դաս 2

Չետագոտական դասերի պլանավորման մեջ նոր նյութի ներկայացումը կազմակերպել եմ նախորդ գիտելիքների հիման վրա կառուցելով, նպատակ ունենալով հնարավորինս աշակերտների մասնակցությամբ վերլուծել ուսումնասիրվող նյութը և վեր հանել հիմնական և միջին դպրոցի թեմայի հիմնական բովանդակության վերաբոյալ: Երկրորդ դասի թեման է<< Քիմիական տարրերի նշանները: Քիմիական տարրերի հարաբերական ատոմային զանգված:>> Աշակերտները զույգերով կատարում են ճիշտ է թե սխալ հայտորոշիչ տեստային առաջադրանքը:

Առաջադրանքի ճիշտ պատասխանները ներկայացնում է Էկրանը:
Պատասխանները պարզաբանում է առաջադրանքն առաջինը ավարտած զույգ
խումբը: Աշակերտներն ակտիվորեն քննարկում են պատասխանները

Ներկայացնում եմ սլայդով <<ատոմի զանգված: Քիմիական տարրերի
հարաբերական ատոմային զանգված>> թեման: Պարզաբանելով, որ ատմների
իրական զանգվածը շատ փոքր է և, որ զանգվածի ատոմային միավորը ածխածին
քիմիական տարրիատոմի զանգվածի 1/12-րդ մասն է:

Աշակերտները գրում են թելադրություն: Թելադրում եմ մի քանի տարրերի
նշաններ: հանձնարարում եմ, որ աշակերտները Թելադրված նշաններ գրեն տողի
սկզբում իրար տակ, որպեսզի ինքնուրույն աշխատանքը կատարվելիս
կարողանան լրացնեն պահանջվող տեղեկությունները:

Թելադրությունը ավարտելուց հետո թույլ է տրվում աշակերտներին
ինքնուրույն գրելու տարրի նշանի հայերեն և լատիներեն անվանումները:
Այնուհետև զույգերը հինգ րոպեյի ընթացքում խորհրդակցել իրար հետ, ճշտել
սխալները: Ժամանակը լրանալուց հետո աշակերտների համար կարդացվում է
նշանների անվանումները նույն հերթականությամբ, ինչ հերթականությամբ
թելադրեցի և առաջարկելով աշակերտներին գունավոր գրիչներով ստուգել
սեփական աշխատանքն ու կատարել ինքնագնահատում: Աշակերտներին
հանձնարարում եմ կատարել գիտելիքները ամրապնդող և դասարանի
հետաքրքրասիրությունը շարժող առաջադրանք. Աշակերտները կազմում են չորս
հոգանոց խմբեր: Խմբերին բաժանվում է առաջադրանքը հետևյալ քարտի տեսքով:

Ակտիվորեն գրում են բոլոր նյութերի անվանումները` նշելով տարրի
հայերեն լատիներեն անունները և տարրի նշանի արդասանության ձևը:
Դասագրքից օգտվելով գրում են բոլոր պարզ նյութերի հարաբերական ատոմային
զանգվածները: Գնահատվում է լավ աշխատող զույգը:

ՎԵՐՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Տվյալների վերլուծությունը կատարվել է աշակերտներին տրված համապատասխան առաջադրանքների արդյունքների հիման վրա, որոնք արտացոլում են սովորողների գիտելիքների մակարդակը:

Չետագոտական դաս իր ձևաչափի մեջ տարբերվում է նախկինում անցակացված դասերից: Աշակերտները նախկինում էլ էին դասին պատրաստված: Սակայն Չետագոտական այս եղանակը դասը ավելի հետաքրքրասեր, ժամանակակից, և ուսուցանող դարձրեց աշակերտների ստեղծագործական միտքը և երևակայությունը: ԵՎ դասը կազմակերպվեց ավելի հագեցած և բովանդակալից:

- * Աշակերտները հստակ ներկայացնում են տեսական հարցերը՝ մտքի հստակությամբ, բանավոր խոսքի հակիրճության մշակույթի զարգացումով:
- * Աշակերտները հստակ գտնում են տրամաբանական հարցերի պատասխանները՝ խմբերի համագործակցային եղանակով և պարզաբանելով տալիս են ճշգրիտ պատասխանը:
- * Աշակերտները հեշտությամբ լուծում են խնդիրները, տարբեր մակարդակի պարզից դեպի բարդ:
- * Աշակերտները կարողանում են աշխատել համակարգչով դիտելով տեսանյութը:
- * Աշակերտները կարողանում են վիրտուալ լաբորատորիայով փորձեր կատարել, որից հետո տալիս են տրամաբանական եզրակացություններ:
- *. Աշակերտների կատարած նախնական, միջանկյալ և վերջնական թեստային առաջադրանքների արդյունքները գոհացնող են:
- * Աշակերտները կարողանում են ակտիվ ստեղծագործական մասնակցությամբ բացահայտել են միջառարկայական և ներառարկայական կապերը:

- Աշակերտները կարողանում են փոխոնակել մտքեր, առաջադրանքը կատարում են նշված ժամանակահատվածում, կարողանում են խմբերը պահպանել աշխատանքային կանոնները:
- * Աշակերտները կարողանում են ինքնուրույն հետազոտության արդյունքում զարգացնել ճանաչողական հետաքրքրությունները:
- * Աշակերտները կարողանում են մտածողության զարգացումով վերլուծել և համեմատել:

Գնահատման սրոյ ու նքները աանձնացրել ենք բանավոր հարցման, գրավոր հարցման, և թեստայ ին առաջադրանքների սշխաստիատանքների: Աշակերտները ըմբռնել ով իրենց կատարած գաործողութթ ու նները՝ կատարել են ինքնագնահատում:

Իմ կողմից գնահատվել է կատարած նախնական, միջանկյ ալ և վերջնական թեստայ ին առաջադրանքները : Գնահատման վերջնական սրոյ ու նքները իրականացվել են Աշակերտների ինքնագնահատման և իմ կողմից Գնահատված սրոյ ու նքների համարժեքութթ ալ: Օգտվել եմ գնահատման 1-10 միավորանոց գնահատման սանդղակից:

Եզրակացութթ ու ն

Տարբերակված ու սուղ ցման բովանդակություն յ ուրացման գործընթացում յ ուրաքանչյ ուր
աշակերտի համար ապահովվեց այց մանևեր՝ աշակերտի ընդունակությունը ու ներքին,
հետաքրքրությունը ու ներքին, հսկում մեղի, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու
մաքսիմալ զարգացման համար: Տարբերակված ու սուղ ցման մեթոդը ինձ հնարավորություն ունի ընձեռեց
ու սուղ մնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական
առանձնահատկությունը ու ներքին և ապահովեց նյ ու թի հեշտոյ ուրացում մը՝ համապատասխանեցնելով
երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկությունը ու ներքին:

Օգտվելով տարբերակված ու սուղ ցման մեթոդներից դասարանում գրանցվեց
առաջադիմություն ան աճ և ակտիվ միջակցություն ունի:

Աշակերտների մեջ ստեղծված միջակցությունը ու նրա հիմնականում մ առաջ մղեց աշակերտներին,
սրոյ ու նքում մ բարձրացավ ու սուղ ման նկատմամբ հետաքրքրությունը ու նրա և թույլ չ տվեց աշակերտին
զգալ թույլ ու ժեղ աշակերտների մեջ:

Բոլորը հավասար են այ ստեղ, բոլորը զբաղված են, բոլորն են պարկերացնում մ
դասապրոցեսում մ իրականացվող դասի բովանդակությունը ու նրա: Ուսում մնառու թյ ան ընթացքում մ մեթոդի
կիրառման սրոյ ու նքում մ դասարանի ապահով աշակերտների մոտգրանցվեց ու շարունակ թյ ան աճ և
ակտիվ մասնակցություն ունի, ավելի հետաքրքիր և մասնակից դարձրեց աշակերտներին, ինչը
ավանդական ու սուղ ցման մեթոդով չ էր հաջողվում:

Աշակերտների երևակայություն և ստեղծագործական մտքի զարգացմանը նախատեց նաև
համակարգչային մեթոդով ու սուղ ցմանում մը :

- Методология и методика дидактического исследования. В. И. Загвязинский. Педагогика (М1982)
- Проблемное обучение: истоки, сущность, перспективы. Т. В. Кудрявцев (М1991)
- Дидактические основы методов обучения И. Я. Лернер 1981
- Педагогика Проблемные ситуации в мышлении и обучении. А. М. Матюшкин. Директ-Медиа 2014.
- Д. Дюви Педагогические идеи (1988)

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Բալասան Խաչատրյան

Առարկա՝	քիմիա	Ամսաթիվ		Կիսամյա	I	Դասարան	7
Թեմա՝	Ատոմ: Քիմիական տարր: Քիմիական տարրերի տարածվածությունը բնության մեջ:						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան						
Դասի նպատակը՝	Ճանոթանալ ատոմ, քիմիական տարր հասկացություններին, տարբերել քիմիական տարրը պարզ նյութից:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	աշակերտները կկարողանան գրել պարբերական համակարգի 20 տարրի քիմիական նշանները (H,O,N,C,F,Cl,Si,Na,K,Ca,Mg): Բացատրել նույն տարրի առաջացրած պարզ նյութերի տարբերությունը:						
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
Տրոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը		Հարցադրումներ			

<p>10րոպե- ընթացք</p>	<p>հարցերին</p> <p>Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են „ցածր,, առաջադիմություն են ունեցող աշակերտները` ստեղծելով „հավելյար,, արժեքներ</p> <p><i>Դասը լսել ուշադիր</i></p> <p><i>Պատասխանել հացերին</i></p>	<p>Կարճ դասախոսության միջոցով ներկայացնում են</p> <p>1.Նյութի փոքրագույն անբաժանելի մասնիկների`ատոմն երի գոյության մասին:</p> <p>2.Տալ ատոմ սահմանումը. Ատոմները նյութի քիմիապես անբաժանելի մանրագույն մասնիկներն են:</p> <p>3. քիմիական տարրը ատոմների որոշակի տեսակ է:</p> <p>4. կարճ դասախոսության քիմիական տարրերի տարածվածությունը բնության մեջ:</p> <p>Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ</p>	<p><i>1. կատարում են հարցերի և հայտորոշիչ թեստի օգնությամբ: Հարցեր` պարզ նյութի ,թե քիմիական</i></p>	<p>րի մեթոդ</p> <p>Կարճ դասախոսություն են</p>
<p>15րոպե</p>				

ք	
---	--

Դասապլան-2

ՈԼՍՈԼԳԻՋ` Բալասան Խաչատրյան

Առարկա`	քիմիա	Ամսաթիվ		Կիսամյա Կ	I	Դասարան	7
Թեմա`	Քիմիական տարրերի նշանները, Քիմիական տարրերի հարաբերական ատոմային զանգված:						
Օգտագործվող նյութեր`	<i>Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան</i>						
Դասի նպատակը`	Քիմիական տարրերն անվանելու, նշաններն արտասանելու, գրառելու, ըստ նշանների քիմիական տարրը ճանաչելու ունակություն:						
	ՈԼՍՈԼԳԱՆՄԱՆ արդյունքներ, որոնք կփաստեն, որ ոԼՍՈԼԳՈՒՄը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	աշակերտները կկարողանան Քիմիական տարրերն անվանելու, նշաններն արտասանելու, գրառելու, ըստ նշանների քիմիական տարրը ճանաչելու ունակություն						
Գործողություններ(Ժամ/տևողություն)	ՈԼՍՈԼՄՆԱԿԱՆ գործունեություն <i>Աշակերտներ</i>	ՈԼՍՈԼՄՆԱԿԱՆ գործունեություն <i>ՈԼՍՈԼԳԻՋ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
Տրոպեսկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները,		Քանի խմբի			

<p>10րոպե- ընթացք</p>	<p>Ներկայացնել տնային աշխատանքները</p> <p>Պատասխանել հարցերին</p> <p>Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են „ցածր,, առաջադիմություն և ունեցող աշակերտները՝ ստեղծելով „հավելյար,, արժեքներ</p>	<p>բացատրել անհասկանալի մասերը</p> <p>Կարճ դասախոսության միջոցով ներկայացնում եմ</p> <p>1. նյութի փոքրագույն անբաժանելի մասնիկների՝ ատոմների գոյության մասին:</p> <p>2.Տալ ատոմ սահմանումը. Ատոմները նյութի քիմիապես անբաժանելի մանրագույն մասնիկներն են:</p>	<p>են բաժանվում բնության մեջ հանդիպող նյութերն ըստ բաղադրության:</p> <p>Որքան են դրանք:</p> <p>Որ նյութերն են կոչվում պարզ, բերել օրինակներ:</p> <p>Որ նյութերն են կոչվում բարդ, բերել օրինակներ</p>	<p>Հարցադրումների մեթոդ</p>
<p>15րոպե</p>	<p><i>Դասը լսել ուշադիր</i></p> <p><i>Բաժանվել խմբերի</i></p> <p><i>Պատասխանել</i></p>	<p>3. քիմիական տարրը ատոմների որոշակի տեսակ է:</p> <p>4. կարճ դասախոսության քիմիական տարրերի տարածվածությունը</p>	<p>Որ նյութերն են կոչվում բարդ, բերել օրինակներ</p> <p>1. կատարում եմ հարցերի և հայտորոշիչ</p>	<p>Կարճ դասախոսություն և</p>

	<i>հացերին</i>	բնության մեջ:	<i>թեստի օգնությամբ: Չարցեր՝ պարզ նյութի ,թե քիմիական մասին է խոսքը. ա.Թթվածինը ջրում քիչ լուծելի գազ է:</i>	
12րոպե	<i>հայտորոշիչ թեստի հարցերին պատասխանել</i>	Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն	<i>բ. Ջրում լուծված թթվածնով շնչում են ձկները: գ.Երկաթը մետաղ է, որը ծգվում է մագնիսի կողմից: դ.Թթվածինը մտնում է ջրի բաղադրության մեջ:</i>	Խմբային աշխատանք
3րոպե- ավարտ		Գնահատում և տնային աշխատանքի	<i>ե.Երկաթի սուլֆիդի բաղադրության մեջ կա երկաթ: զ.Ջրի բաղադրության մեջ կա ջրածին:</i>	

		հանձնարում		
Տնային աշխատանք	<i>Դասը սովորել պատմել : Առաջադրանք 1</i>			